

<<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>>

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 29.01.2019թ. թիվ 1 նիստում:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-մայոր

Մ.Բաբայան

<<_____>> _____ 2019թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՑԻՏՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱԶԴԴՄԱՆ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում խրախուսվում է ստեղծագործական ազատ միտքը: Տարբեր միջոցառումներով՝ գիտական, ֆինանսական, տեխնիկական, խթանվում է Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և սովորողների կողմից ստեղծագործելու ձգտումները: Այս առումով շատ է կարևորվում հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանությունը:

Յուրաքանչյուր հեղինակ, ստեղծագործելիս պետք է առաջնորդվի մի կարևորագույն սկզբունքով՝ ակադեմիական ազնվությամբ: Հեղինակային իրավունքի օբյեկտներից մեկը հենց գրական (գրական-գեղարվեստական, գիտական, ուսումնական, հրապարակախոսական և այլ) ստեղծագործությունն է, և ակադեմիական անազնվության դրսևորման արդյունքում մենք բախվում ենք գրագողության հետ:

«Գրագողություն» բառի վերաբերյալ կան տարբեր բացատրություններ, մասնավորապես՝ ուրիշի գրածը մասամբ կամ ամբողջությամբ իբրև իրենը ներկայացնելը, հրատարակելը (Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1976), ուրիշի ստեղծագործությունները մասամբ կամ ամբողջովին իր անունով ներկայացնելը, հրատարակելը (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1969), գրաշորթություն, բանագողություն, բանաքաղություն (Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, «Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիայի Հրատարակչություն», 1967), բանագողություն, բանաքաղություն, գրաշորթություն /ուրիշի գրածը մասամբ կամ ամբողջությամբ սեփական անունով իբրև իրենը ներկայացնելը, հրատարակելը/ (Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, «Երևանի Պետական Համալսարան», 2009): Հաշվի առնելով այս երևույթի կարևորությունը, «գրագողություն» բառին տրվել է նաև իրավական բնութագիր, մասնավորապես «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվում է, որ ուրիշի ստեղծագործությունից մտքեր, հատվածներ քաղելը առանց դրանց ստեղծագործական վերամշակման և առանց ձեռքբերման սկզբնաղբյուրի նշման և որպես իրենը ներկայացնելը կամ ստեղծագործությունն ամբողջությամբ իր անունով ներկայացնելը համարվում է գրագողություն:

I. ՈԼՈՐՏԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

2. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օրենսդրական կարգավորման նպատակներն են ակադեմիական ազնվության և էթիկայի պահպանությունը, այլ հեղինակների կատարած աշխատանքների հանդեպ հարգանքը, գրագողության բացառումը:

3. Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կարգավորմանն է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 63-րդ և 64-րդ գլուխները, որոնցով սահմանվում են հեղինակային իրավունքի օբյեկտները, տեսակները և այլն:

4. Գրականության, գիտության, արվեստի բնագավառների ստեղծագործությունների նկատմամբ դրանց հեղինակների իրավունքների հետ կապված հարաբերություններին ավելի մանրամասն իրավական անդրադարձ է կատարված «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով:

II. ԳՐԱԳՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

5. Գրագողությունը բացառելու և ակադեմիական ազնվությունը պահպանելու նպատակով անհրաժեշտ է իրավաչափ կիրառել ցիտման նորմերը:

6. Գրագողություն կարող է դրսևորվել հետևյալ դեպքերում.

1) ամբողջությամբ կամ մասամբ այլ մարդկանց կողմից կազմված աշխատանքը որպես սեփականը ներկայացնելը,

2) բնօրինակի տեքստը նույնությամբ արտատպելն՝ առանց աղբյուրին համապատասխան հղում կատարելու և մեջբերումը չակերտների մեջ առնելու,

3) այլ անձի մտքերը, գաղափարները սեփական շարադրանքում ներառելն՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

4) բնօրինակի տեքստի մի քանի բառ փոփոխելը, սակայն մտքի կառուցվածքը պահպանելը կամ բնօրինակի միտքը զարգացնելն՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

5) ուրիշի մտքերի, բառերի կիրառմամբ սեփական գաղափարները ձևակերպելը՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

6) տարբեր մեջբերումներն ու ձևակերպումներն իրար կցելն՝ առանց աղբյուրին հղում կատարելու,

7) հղում կատարելն այն աղբյուրին, որն անձամբ չեք կարդացել այլ հանդիպել եք մեկ այլ հեղինակի աշխատանքում,

8) գրականության ցուցակ կազմելը, որում ներառված են աղբյուրներ, որոնք ինքներդ չեք կարդացել և դրանց հղում չեք կատարել աշխատանքում,

9) մասամբ կամ ամբողջությամբ կրկնօրինակելը ձեր (հեղինակի) այն աշխատանքը, որը արդեն ներկայացրել եք մեկ այլ դասընթացի կամ գնահատման համար:

III. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

7. Հեղինակային իրավունքի պաշտպանության երաշխիքներ են նախատեսվում տարբեր իրավական ակտերով, մասնավորապես «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլուխը կարգավորում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների պաշտպանությունը:

8. Հեղինակային և հարակից իրավունքները խախտելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածով (Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը) նախատեսվում է նաև քրեական պատասխանատվություն:

9. Գրագողության համար կարող են կիրառվել նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ներբուհական իրավական ակտերով սահմանված այլ պատասխանատվության տեսակներ:

IV. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10. Ցիտման չափանիշները սահմանվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 11.02.2015 թվականի թիվ 2 նիստում հաստատված «Դիպլոմային

աշխատանքի և մագիստրոսական թեզի ընտրության, պատրաստման և պաշտպանության կարգ»-ով, ՀՀ կառավարության 08.08.1997 թվականի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 327 որոշմամբ:

11. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են ՀՀ ոստիկանության կրթահամալիրում հրապարակվող աշխատանքների վրա: